«Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների
«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2011 թ. ինդեքս»

2011 թ. սեպտեմբերի 22-ին «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտները համատեղ հրապարակել են **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2011թ.»** տարեկան զեկույցը, որում արդեն վեցերորդ տարին է (սկսած 2006 թ.) աշխարհի բազմաթիվ երկրների թվում հրապարակվում են Հայաստանի ու Ադրբեջանի տնտեսական ազատության ինդեքսները: Վրաստանի գնահատականը հրապարակվում է 2005 թ.-ից:

Գնահատման մեթոդաբանությունը[1]. «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների հրապարակած **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010»** զեկույցի մեջ տնտեսական ազատության ինդեքսը գնահատվել է աշխարհի 141 երկրների համար: Գնահատման ժամանակ կիրառվել է 0-ից մինչև 10 գնահատման համակարգ, ընդ որում՝ 10-ը՝ ամենաազատ երկրի գնահատականն է, իսկ 0-ին մոտը՝ ամենասահմանափակ երկրինը: Օգտագործվել են 42 անկախ տնտեսական ենթագործոններ, որոնք խմբավորվել են 5 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ ա) կառավարության չափը, այսինքն՝ պետական ապարատի չափերը և դրա գործառույթների ընդգրկունությունը, բ) իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը, գ) «առողջ» փողի մատչելիությունը, դ) միջազգային առևտրի ազատությունը, ե) վարկային շուկայի, աշխատուժի շուկայի և

[1] *«Ֆրեյզեր» և «կատո» ինստիտուտների հրապարակած **«Տնտեսական ազատությունը աշխարհում ինդեքսի»** առանձին ենթագործոնների գնահատման մեթոդաբանության մանրամասները ներկայացված են «Հայաստանի տնտեսությունը միջազգային գնահատումներում» գրքում:*

գործարարության կարգավորումը: Այս հինգ խոշոր գործոններից յուրաքանչյուրը ստացել է առանձին գնահատական, իսկ ինդեքսի համախառն գնահատականը ստանալու համար վերցվել է դրանց թվաբանական միջինը:

2011թ. զեկույցում տնտեսական ազատության ինդեքսը հաշվարկելիս հեղինակները օգտվել են երկրների 2009թ. տնտեսական զարգացման վերաբերյալ միջազգային ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) հրապարակած վիճակագրական տվյալներից, քանի որ դրանք համարվել են առավել ամբողջական[2]:

Հայաստանի գնահատականները. Ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատման՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների թվում տնտեսապես առավել ազատ երկրներից մեկն է և աշխարհի 141 երկրների շարքում գրավում է 43-րդ տեղը: Նկատենք, որ 2010 թ. զեկույցում Հայաստանը աշխարհի 141 երկրների շարքում գրավում էր 50-րդ տեղը, որը նշանակում է՝ Հայաստանի դիրքը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 7 տեղով: Բարելավվել է նաև Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի ընդհանուր գնահատականը. 2011 թ. զեկույցում Հայաստանի գնահատականը կազմել է «7.15»՝ նախորդ տարվա «7.11»-ի փոխարեն:

Հայաստանի 2011թ. ինդեքսի վերլուծությունը ըստ 5 ենթաինդեքսների ցույց է տալիս, որ 2009թ.-ի ընթացքում **բարելավվել են** «Կառավարության չափը», «Առողջ փողի մատչելիությունը» ենթաինդեքսները և **վատացել են** «Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի

[2] *http://www.freetheworld.com/2011/reports/world/EFW2011_app.pdf:*

պաշտպանվածությունը» «Միջազգային առևտրի ազատությունը», «Վարկի, աշխատուժի և գործարարության կարգավորումը» ենթաինդեքսները: Սակայն առավել ուշագրավ են այս 5 ենթաինդեքսների հիմքում ընկած առանձին ենթագործոնների և դրանցում ներառվող ցուցանիշների գնահատականների փոփոխությունները:

«Կառավարության չափը» (Size of Government) ենթաինդեքսի **0.05 միավորով բարելավումը** պայմանավորվել է 2009թ.-ին ՀՆԱ-ում կառավարության սպառման, ինչպես նաև կառավարության տրանսֆերտների ու լրահատկացումների տեսակարար կշիռների նվազմամբ, ընդ որում՝ Կառավարության տրանսֆերտներն ու լրահատկացումները 2009թ.-ին կազմել են ՀՆԱ-ի 8.32%-ը՝ նախորդ տարվա 8.44%-ի համեմատ, իսկ Կառավարության սպառումը 2009թ.-ին կազմել է ՀՆԱ-ի 13.42%-ը՝ նախորդ տարվա 14.04%-ի համեմատ:

«Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը» (Legal Structure and Security of Property Rights) ենթաինդեքսը **վատացել է 0.02 միավորով**, որի պատճառը դրա հիմքում ընկած «Մասնավոր սեփականության պաշտպանվածություն» ցուցանիշի գնահատականի վատացումն է (0.92 միավոր) և «Անշարժ գույքի վաճառքի գծով կանոնակարգիչ սահմանափակումներ» ցուցանիշի գնահատականի վատացումը (0.06 միավոր): Սակայն, միևնույն ժամանակ, դրական փոփոխություններ են գրանցվել այս ենթաինդեքսի մեջ մտնող «Դատական համակարգի անկախություն» ցուցանիշի (0.61 միավոր) և «Անաչառ դատարաններ» ցուցանիշի (0.27 միավոր) բարելավման ուղղությամբ, որը մասամբ մեղմել է ենթաինդեքսի վատացումը:

«Առողջ փողի մատչելիությունը» (Access to Sound Money) ենթաինդեքսը **բարելավվել է 0.56 միավորով**՝ «Փողի առաջարկի աճ» ցուցանիշի (1.32 միավոր) և «Վերջին տարվա գնաճը» ցուցանիշի

(1.11 միավոր) բարելավումների շնորհիվ: Ընդ որում, նկատենք, որ փողի առաջարկի աճը 2009 թ.-ին կազմել էր 2.71%՝ նախորդ տարվա 9.3%-ի համեմատ, իսկ 2009թ.-ին գնաճը կազմել էր 3.41%՝ նախորդ տարվա 8.95%-ի համեմատ: Սակայն, ըստ ինդեքսը գնահատող փորձագետների, 2009թ.-ին բարձր է եղել Հայաստանի գնաճի տատանողականությունը՝ 2.57% նախորդ տարվա 2.05%-ի համեմատ, որի արդյունքում այս ցուցանիշի գնահատականը վատացել է 0.21 միավորով՝ թուլացնելով մյուս ցուցանիշների բարելավումների ազդեցությունը:

«Միջազգային առևտրի ազատությունը» (Freedom to Trade Internationally) ենթաինդեքսը վատացել է 0.12 միավորով, որի հիմնական պատճառը «Միջազգային կապիտալի սահմանափակումներ» ենթագործոնի գնահատականի 0.58 միավորով վատացումն է՝ դրա հիմքում ընկած «Օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների սահմանափակում» և «Կապիտալի գործարքների սահմանափակում» ցուցանիշների գնահատականների համապատասխանաբար 0.32 և 0.84 միավորով վատացման պատճառով: Ընդ որում, հարկ է նկատել, որ կապիտալ և ֆինանսական հաշվի գործարքների գծով Հայաստանում ոչ մի սահմանափակում չի մտցվել, հետևաբար և «Կապիտալ գործարքների սահմանափակում» ցուցանիշի վատացումը 0.84 միավորով, մեր կարծիքով, սխալ է և հետագա ճշգրտման կարիք ունի: Ինչ վերաբերում է **«Միջազգային առևտրի ազատությունը»** ենթաինդեքսի մեջ մտնող մյուս երկու՝ «Միջազգային առևտրի հարկում» և «Առևտրի կարգավորիչ սահմանափակումներ» ենթագործոնների գնահատականներին, դրանք բարելավվել են համապատասխանաբար 0.05 և 0.22 միավորով, պայմանավորված 2008թ. համեմատ միջազգային առևտրի հարկումից ստացվող եկամուտների և ներմուծման/արտահանման իրականացման ծախսի նվազեցմամբ: Այս ցուցանիշների գնահատականների բարելավումը մասամբ մեղմել է «Միջազգային կապիտալի սահմանափակումներ»

ենթագործոնի գնահատականի բացասական ազդեցությունը **«Միջազգային առևտրի ազատությունը»** ենթաինդեքսի վրա:

«Վարկի, աշխատուժի և գործարարության կարգավորումը» (Regulation of Credit, Labor, and Business) ենթաինդեքսը վատացել է 0.27 միավորով, թեև դրա մեջ մտնող երկու՝ «Աշխատուժի շուկայի կարգավորում» և «Գործարարության կարգավորում» ենթագործոնների գնահատականները բարելավվել են համապատասխանաբար 0.11 և 0.47 միավորով: Այս ենթաինդեքսի վատացումը պայմանավորված է «Վարկային շուկայի կարգավորում» ենթագործոնի գնահատականի 0.89 միավորով վատացմամբ, որի պատճառը «Մասնավոր հատվածին տրամադրվող վարկեր» ցուցանիշի գնահատականի 3.6 միավորով վատացումն է[3]: Ըստ զեկույցի մեթոդաբանության, Հայաստանում մասնավոր հատվածի վարկավորման տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի ծավալում 2008թ.-ին կազմել է 98.28%, իսկ 2009թ.-ին՝ 65.92%: Գտնում ենք, որ 2009թ. ցուցանիշը սխալ է և հետագա ճշգրտման կարիք ունի:

---

[3] **«Մասնավոր հատվածին տրամադրվող վարկեր»** ցուցանիշի գնահատականը հաշվարկվում է (Vi-Vmin)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի մասնավոր հատվածում տեղաբաշխված տեղական վարկերի տեսակարար կշիռն է վարկերի ընդհանուր ծավալում: Vmax-ը՝ ցուցանիշի առավելագույն, իսկ Vmin-ը նվազագույն արժեքներն են 1990 բազիսային տարում: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 10% և 99.9%: Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ մասնավոր հատվածին տրամադրված տեղական վարկերի տեսակարար կշիռը մոտ է բազիսային տարվա առավելագույն ցուցանիշին (99.9%): Երկրի գնահատականը 0-ին մոտ կլինի, եթե մասնավոր հատվածին տրամադրված տեղական վարկերի տեսակարար կշիռը մոտ է բազիսային տարվա նվազագույն ցուցանիշին (10%):

Այսպիսով, վերոնշյալ փոփոխությունների արդյունքում **«Ֆրեյզեր»** և **«Կատո»** ինստիտուտների **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2011 թ. ինդեքս»** զեկույցում նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքը աշխարհի 141 երկրների շարքում **բարելավվել է** «Առողջ փողի մատչելիությունը» ենթաինդեքսի գծով՝ 15 տեղով, «Միջազգային առևտրի ազատությունը» ենթաինդեքսի գծով՝ 6 տեղով, «Աշխատուժի շուկայի կարգավորում» ենթագործոնի գծով 1 տեղով և «Գործարարության կարգավորում» ենթագործոնի գծով՝ 19 տեղով: Միաժամանակ, Հայաստանի դիրքը աշխարհի 141 երկրների շարքում 3 տեղով **վատացել է** «Կառավարության չափը» ենթաինդեքսի, 1 տեղով՝ ««Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը» ենթաինդեքսի և 23 տեղով՝ «Վարկային շուկայի կարգավորում» ենթագործոնի գծով: 2009 թ. տվյալներով գնահատված ենթաինդեքսներով Հայաստանի դիրքը 141 երկրների շարքում ներկայացված է աղյուսակ 4-ում:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. Նախկին ԽՍՀՄ երկրներից գնահատվել են 11, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ 13 երկրների ինդեքսները (տե՛ս աղյուսակ 2): Նշված երկրների ինդեքսների վերլուծությունից հետևում է, որ նախկին ԽՍՀՄ երկրների թվում Հայաստանը տնտեսական ազատության ամփոփ ինդեքսի վարկանիշով զիջում է Էստոնիային, Լիտվային և Վրաստանին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների թվում՝ Սլովակիային, Հունգարիային, Բուլղարիային, Ալբանիային և Մոնտենեգրոյին: Աշխարհի 141 երկրների շարքում Վրաստանը զբաղեցնում է 27-րդ, իսկ Ադրբեջանը՝ 84-րդ տեղը: Հարավային Կովկասի երկրների 2006-2009 թթ. տվյալներով հաշվարկված 42 ենթագործոնների 2008-2011 թթ. զեկույցներում տրված գնահատականների համեմատական վերլուծությունը մանրամասն ներկայացված է աղյուսակ 1-ում:

Տնտեսության առանձին ոլորտների գծով հաշվարկված ենթաինդեքսներով Հայաստանը զիջում է ավելի շատ երկրների: Բացառություն են կազմում միայն ***«Կառավարության չափը»*** և ***«Առողջ փողի մատչելիությունը»*** ենթաինդեքսները, որոնցով Հայաստանը գրավում է համապատասխանաբար 21-րդ և 30-րդ տեղերը աշխարհի 141 երկրների շարքում (տե՛ս աղյուսակներ 3 և 4):

«Տնտեսական ազատությունն աշխարհում. 2011 թ.» զեկույցում տնտեսապես ազատ երկրների առաջին տասնյակում են Հոնկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Ավստրալիան, Կանադան, Չիլին, Մեծ Բրիտանիան, Մավրիկիան և ԱՄՆ-ը, իսկ վերջին տասնյակում՝ Ալժիրը, Չադը, Բուրունդին, Կոնգոյի հանրապետությունը, Գվինեա-Բիսաուն, Կենտրոնական աֆրիկյան հանրապետությունը, Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունը, Անգոլան, Վենեսուելան, Մյանմարը և Զիմբաբվեն: Նկատենք, որ տարեցտարի վատանում է տնտեսական ազատությունը ԱՄՆ-ում. եթե 2000թ.-ին իր ինդեքսով ԱՄՆ-ը զբաղեցնում էր աշխարհում 3-րդ տեղը, ապա 2011թ.-ին՝ տասներորդն է:

Հարավկովկասյան երկրների «Տնտեսական ազատությունը աշխարհում. 2011 թ. ինդեքսի» համեմատությունը ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատականների[4]

Աղյուսակ 1

		Հայաստան				Վրաստան				Ադրբեջան			
		2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009
	Ցուցանիշները												
1.	**Կառավարության չափը**	**8.35**	**8.10**	**7.62**	**7.67**	**7.42**	**7.00**	**8.05**	**7.81**	**6.00**	**5.04**	**5.27**	**5.37**
ա	Կառավարության սպառումը	7.76	7.94	7.64	7.82	6.97	4.81	7.53	5.07	5.91	4.06	4.65	5.02
բ	Տրանսֆերտներ և լրահատկացումներ	8.79	8.96	7.84	7.87	7.73	8.18	7.68	8.17	7.09	7.09	9.44	9.44
գ	Պետական ձեռնարկություններ և ներդրումներ		7.00	6.00	6.00	6.00	6.00	8.00	8.00	--	4.00	2.00	2.00
դ	Առավելագույն սահմանային հարկային դրույքը, այդ թվում՝	8.50	8.50	9.00	9.00	9.00	9.00	9.00	10.00	5.00	5.00	5.00	5.00
	Եկամտահարկի առավելագույն սահմանային դրույքը	9.0	9.00	10.00	10.00	10.00	10.00	9.00	10.00	7.00	7.00	7.00	7.00
	Եկամտահարկի և սոցապ վճարների հարկման առավելագույն սահմանային դրույքը	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	9.00	10.00	3.00	3.00	3.00	3.00
2.	**Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը**	**5.56**	**5.61**	**5.49**	**5.47**	**4.95**	**5.26**	**5.07**	**5.13**	**5.67**	**6.23**	**6.40**	**5.96**
ա	Դատական համակարգի անկախությունը	2.18	2.13	2.10	2.71	2.54	2.99	2.79	3.22	2.81	4.06	4.79	3.86
բ	Անաչառ դատարաններ	3.12	3.35	3.13	3.40	2.70	3.29	3.42	3.68	3.68	4.41	4.88	4.19
գ	Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը	5.81	6.00	5.37	4.45	3.86	4.36	4.08	3.74	4.57	5.39	5.36	4.76
դ	Քինվորական միջամտությունը	5.83	5.83	5.83	5.83	4.20	4.50	3.70	3.70	6.67	6.67	6.67	5.83
ե	Իրավական համակարգի ամբողջականությունը	5.00	5.00	5.00	5.00	--	--	--	--	5.83	5.83	5.83	5.83
զ	Պայմանագրերի հարկադիր կատարումը	7.16	7.16	7.16	7.16	6.50	6.50	6.50	6.50	7.33	7.55	7.55	7.55

[4] *Աղբյուրը՝ Economic Freedom of the World: 2011 Annual Report, գլուխ 2, էջ 30, 33, 73; Economic Freedom of the World: 2010 Annual Report, գլուխ 2, էջ 26, 29, 69; Economic Freedom of the World: 2009 Annual Report, գլուխ 4, էջ 54, 57, 97; Economic Freedom of the World: 2008 Annual Report, գլուխ 3, էջ 46, 49, 89:*

է	Անշարժ գույքի վաճառքի գծով կանոնակարգիչ սահմանափակումներ	9.79	9.83	9.83	9.77	9.87	9.94	9.94	9.93	8.78	9.69	9.73	9.73
3.	**«Առողջ փողի» մատչելիությունը**	**9.43**	**8.98**	**8.88**	**9.44**	**8.77**	**8.27**	**9.08**	**9.24**	**7.59**	**7.96**	**7.55**	**7.83**
ա	Փողի առաջարկի աճը	8.91	7.25	8.14	9.46	6.89	5.90	8.66	9.30	9.06	7.20	6.88	7.58
բ	Գնաճի տատանողականությունը	9.40	9.56	9.18	8.97	9.13	9.03	9.64	7.99	7.96	8.00	7.49	4.00
գ	Վերջին տարվա գնաճը	9.42	9.32	8.21	9.32	9.07	8.15	8.00	9.65	8.34	6.66	5.84	9.72
դ	Տվյալ երկրում և արտասահմանում արտարժույթով բանկային հաշիվներ ունենալու ազատությունը	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	5.00	10.00	10.00	10.00
4.	**Միջազգային առևտրի ազատությունը**	**6.53**	**6.69**	**6.61**	**6.49**	**7.44**	**7.74**	**7.73**	**7.41**	**6.38**	**6.71**	**6.66**	**6.44**
ա	**Միջազգային առևտրի հարկումը**, այդ թվում	7.69	8.88	8.77	8.82	8.55	8.71	8.88	9.10	6.99	7.28	7.91	8.07
	առևտրի հարկումից ստացվող եկամուտները	9.31	9.13	8.75	8.91	9.29	9.77	9.79	9.83	--	--	9.19	9.19
	միջին մաքսային դրույքը	9.40	9.42	9.44	9.44	8.60	9.72	9.72	9.74	8.08	8.16	8.18	8.22
	մաքսային դրույքների փոփոխականությունը	4.36	8.10	8.11	8.11	7.76	6.65	7.12	7.74	5.89	6.39	6.36	6.80
բ	**Առևտրի կարգավորիչ սահմանափակումները**	5.75	5.66	6.42	6.64	7.20	7.81	7.96	7.62	3.40	3.92	4.00	3.95
	Առևտրի ոչ մաքսային խոչընդոտները	5.34	5.17	5.35	5.33	6.12	7.34	7.41	6.73	4.82	5.20	4.81	4.21
	Ներմուծման և արտահանման իրականացման ծախսը	6.15	6.15	7.49	7.95	8.28	8.28	8.51	8.51	2.64	2.64	3.19	3.69
գ	Առևտրի հատվածի չափերը	1.27	1.11	0.29	0.00	4.42	4.28	4.01	3.37	6.95	6.29	5.67	4.59
դ	Պաշտոնական փոխարժեքը «սև շուկայի» փոխարժեքի համեմատ	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00
ե	**Միջ. կապիտալի շուկայի սահմանափակումները**, այդ թվում	7.94	7.81	7.56	6.98	7.04	7.90	7.82	6.97	4.55	6.04	5.74	5.61
	Օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների սահմանափակումը	6.65	6.45	5.95	5.63	6.40	7.33	7.17	6.25	6.79	7.08	6.48	5.84
	Կապիտալի գործարքների սահմանափակումը	9.23	9.17	9.17	8.33	7.69	8.46	8.46	7.69	2.31	5.00	5.00	5.38
5.	**Վարկի, աշխատուժի և գործարարության կարգավորումը**	**6.41**	**6.77**	**6.94**	**6.67**	**7.77**	**7.94**	**7.62**	**7.23**	**5.82**	**6.42**	**6.86**	**6.90**

ա	**Վարկային շուկայի կարգավորումը,** այդ թվում	8.34	8.95	8.95	8.06	9.25	9.25	7.76	6.75	6.98	6.88	7.50	7.75
	Բանկերի մասնավոր սեփականությունը	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	5.00	5.00	5.00	5.00
	Մրցակցությունը օտարերկրյա բանկերի հետ	7.00	7.00	7.00	7.00	8.00	8.00	8.00	8.00	6.00	6.00	6.00	6.00
	Մասնավոր հատվածին տրամադրվող վարկերը	9.36	9.82	9.82	6.22	10.00	10.00	4.02	0.00	6.52	6.52	10.00	10.00
	Տոկոսադրույքների կարգավորումները և/կամ բացասական իրական տոկոսադրույքները	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	10.00	9.00	10.00
բ	**Աշխատուժի շուկայի կարգավորումը**, այդ թվում	5.65	6. 20	6.12	6.23	6.89	7.31	7.64	7.54	5.65	6.31	6.89	6.80
	Աշխատանքի ընդունման դժվարությունը և նվազագույն աշխատավարձի ազդեցությունը	6.70	6.70	6.70	5.00	10.00	10.00	10.00	10.00	6.70	6.70	10.00	8.33
	Աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հեշտությունը	5.60	6.23	6.03	5.79	6.74	7.29	7.39	6.95	7.13	6.95	6.77	6.66
	Կոլեկտիվ համաձայնագրերը	7.61	7.46	7.19	7.02	8.05	7.94	7.84	7.70	7.38	7.25	7.59	8.02
	Ժամային կարգավորումները	8.00	8.00	8.00	10.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00
	Աշխատանքից ազատման պարտադիր ծախքը	8.79	8.79	8.79	9.60	9.63	9.63	9.63	9.60	7.96	7.96	7.96	8.79
	Քինվորական ծառայությունը, զորակոչը	0.00	0.00	0.00	0.00	3.00	1.00	3.00	3.00	1.00	1.00	1.00	1.00
գ	**Գործարարության կարգավորումը,** այդ թվում	4.86	5.16	5.25	5.72	7.03	7.27	7.46	7.40	4.82	6.07	6.18	6.16
	Գների հսկողությունը	5.00	5.00	5.00	5.00	8.00	8.00	8.00	8.00	6.00	6.00	6.00	6.00
	Վարչարարական պահանջները	3.27	3.59	3.73	3.42	5.18	6.03	6.39	6.08	4.21	5.33	5.29	4.49
	Բյուրոկրատիայի ծախքը	6.26	6.07	6.31	6.52	6.16	6.08	6.83	6.65	5.41	5.03	5.18	5.58
	Գործարարություն սկսելու հեշտությունը	9.36	9.38	9.49	9.49	9.55	9.86	9.87	9.85	8.97	9.65	9.65	9.71
	Ոչ պաշտոնական վճարները պետական պաշտոնյաներին	4.39	3.78	3.74	3.64	5.62	6.24	6.21	6.28	4.19	4.02	4.51	3.90
	Լիցենզավորման սահմանափակումներ	8.28	8.28	8.50	8.46	9.02	9.04	9.28	9.28	6.15	6.60	6.87	6.84
	Հարկային պարտավորությունների կատարման ծախսերը	0.00	0.00	0.00	3.49	5.66	5.66	5.66		0.00	5.79	5.79	6.57
	Տնտեսական ազատության չճշգրտված ինդեքսը	**7.25**	**7.23**	**7.11**	**7.15**	**7.27**	**7.24**	**7.51**	**7.36**	**6.29**	**6.47**	**6.55**	**6.50**
	Երկրի դիրքը աշխարհի 141 երկրների շարքում՝ ըստ չճշգրտված ինդեքսի	**41**	**48**	**50**	**43**	**39**	**45**	**23**	**27**	**95**	**89**	**86**	**84**

«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2011 թ. ինդեքսը» նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատականների

Աղյուսակ 2

Երկիր	Դիրքը 141 երկրների շարքում	Տնտեսական ազատության ինդեքսը	Կոռուպցիայի ընկալման ցուցանիշ	Սրտաբուծության ազատության ինդեքսը	«Վոշդ ըզ փոդի» մատչելիության ցուցանիշ	Միջազգային առևտրի ազատության ինդեքսը	Դրամի, աշխատուժի և կապիտալի շրջանառության ազատության ինդեքսը
Սլովակիա	13	7.56	6.44	5.96	9.69	8.34	7.34
Էստոնիա	15	7.52	5.51	7.17	9.51	7.76	7.67
Հունգարիա	15	7.52	6.20	6.48	9.53	7.95	7.41
Լիտվա	24	7.40	6.73	6.48	9.16	6.94	7.71
Վրաստան	27	7.36	7.81	5.13	9.24	7.41	7.23
Բուլղարիա	28	7.34	7.29	5.13	9.44	7.17	7.66
Ալբանիա	30	7.32	8.20	5.45	9.63	6.63	6.72
Մոնտենեգրո	37	7.27	5.96	6.13	9.49	6.75	8.01
Հայաստան	43	7.15	7.67	5.47	9.44	6.49	6.67
Չեխիա	46	7.13	4.87	6.39	9.48	7.59	7.33
Ռումինիա	48	7.08	6.27	5.87	9.03	7.40	6.83
Լեհաստան	53	7.00	5.63	6.25	9.32	6.84	6.95
Ղազախստան	56	6.97	6.83	5.92	8.29	6.25	7.53
Լատվիա	60	6.92	4.84	6.42	8.90	7.06	7.39
Մակեդոնիա	64	6.88	6.88	5.05	7.96	6.66	7.86
Ղրղզստան	70	6.81	7.07	4.72	8.20	6.69	7.37
Սլովենիա	74	6.78	4.57	6.21	9.63	6.74	6.73
Թուրքիա	75	6.74	6.90	5.59	8.91	6.40	5.90
Ռուսաստան	81	6.55	6.78	5.73	8.30	5.82	6.11
Ադրբեջան	84	6.50	5.37	5.96	7.83	6.44	6.90
Խորվաթիա	89	6.46	5.13	5.55	8.49	6.30	6.82
Սերբիա	91	6.44	6.85	4.68	7.72	6.30	6.64
Մոլդովա	96	6.29	5.61	5.65	7.74	6.32	6.14
Բոսնիա և Հերցեգովինա	100	6.23	5.49	3.94	8.30	6.55	6.91
Իրան	105	6.16	6.47	5.76	8.18	4.98	5.42
Ուկրաինա	125	5.70	5.72	4.74	5.32	6.68	6.03

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը ըստ տնտեսական ոլորտների՝ գնահատված «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների կողմից (2011 թ.)

Աղյուսակ 3

Երկիր	Դիրքը ըստ տնտեսական ազատության ամփոփ ինդեքսի (աշխարհի 141 երկրների շարքում)	Դիրքը ըստ ոլորտների					Դիրքը ըստ ենթաոլորտների		
		Կառավարության չափը	Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի ապահովվածությունը	«Առողջ փողի» կայունությունը	Միջազգային առևտրի ազատությունը	Վարկի, աշխատուժի և գործատվության կարգավորումը	Վարկային շուկայի կոմպոնենտը	Աշխատուժի շուկայի կոմպոնենտը	Գործատվության կոմպոնենտը
		1	2	3	4	5	(5-Ա)	(5-Բ)	(5-Գ)
Սլովակիա	13	69	55	3	3	45	22	44	108
Էստոնիա	15	102	26	22	10	22	5	87	11
Հունգարիա	15	79	40	20	8	35	51	46	56
Լիտվա	24	54	41	45	53	21	20	56	35
Վրաստան	27	15	86	40	24	56	119	40	7
Բուլղարիա	28	31	85	29	36	23	12	28	97
Ալբանիա	30	8	79	6	72	83	78	86	55
Մոնտենեգրո	37	86	52	25	62	12	7	19	71
Հայաստան	43	21	78	30	79	86	83	77	88
Չեխիա	46	118	44	27	18	46	54	36	92
Ռումինիա	48	76	61	49	25	74	101	58	74
Լեհաստան	53	95	48	33	60	64	69	43	120
Ղազախստան	56	49	58	71	95	31	24	53	54
Լատվիա	60	120	43	53	44	38	45	54	61
Մակեդոնիա	64	46	90	82	70	17	35	24	31
Ղրղզստան	70	37	95	74	68	41	37	71	28
Սլովենիա	74	126	49	7	64	80	72	85	78
Թուրքիա	75	45	72	52	83	118	121	123	47
Ռուսաստան	81	52	66	70	111	111	74	81	136
Ադրբեջան	84	106	54	87	80	66	96	60	51
Խորվաթիա	89	111	74	64	91	75	48	72	114
Սերբիա	91	47	97	90	90	89	36	94	116
Մոլդովա	96	97	70	89	88	110	97	106	103
Բոսնիա և Հերցեգովինա	100	103	121	69	77	65	58	66	99
Իրան	105	67	64	75	134	130	122	131	110
Ուկրաինա	125	91	94	138	69	113	79	76	138

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը աշխարհի 141 երկրների շարքում ըստ տնտեսական ոլորտների և հաջորդականության՝ գնահատված «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների կողմից (2011 թ.)

Աղյուսակ 4

Կառավարության չափը	
Ալբանիա	8
Վրաստան	15
Հայաստան	21
Բուլղարիա	31
Ղրղզստան	37
Թուրքիա	45
Մակեդոնիա	46
Սերբիա	47
Ղազախստան	49
Ռուսաստան	52
Լիտվա	54
Իրան	67
Սլովակիա	69
Ռումինիա	76
Հունգարիա	79
Մոնտենեգրո	86
Ուկրաինա	91
Լեհաստան	95
Մոլդովա	97
Էստոնիա	102
Բոսնիա և Հերցեգ.	103
Ադրբեջան	106
Խորվաթիա	111
Չեխիա	118
Լատվիա	120
Սլովենիա	126

Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը	
Էստոնիա	26
Հունգարիա	40
Լիտվա	41
Լատվիա	43
Չեխիա	44
Լեհաստան	48
Սլովենիա	49
Մոնտենեգրո	52
Ադրբեջան	54
Սլովակիա	55
Ղազախստան	58
Ռումինիա	61
Իրան	64
Ռուսաստան	66
Մոլդովա	70
Թուրքիա	72
Խորվաթիա	74
Հայաստան	78
Ալբանիա	79
Բուլղարիա	85
Վրաստան	86
Մակեդոնիա	90
Ուկրաինա	94
Ղրղզստան	95
Սերբիա	97
Բոսնիա և Հերցեգ.	121

«Առողջ փողի» մատչելիությունը	
Սլովակիա	3
Ալբանիա	6
Սլովենիա	7
Հունգարիա	20
Էստոնիա	22
Մոնտենեգրո	25
Չեխիա	27
Բուլղարիա	29
Հայաստան	30
Լեհաստան	33
Վրաստան	40
Լիտվա	45
Ռումինիա	49
Թուրքիա	52
Լատվիա	53
Խորվաթիա	64
Բոսնիա և Հերցեգ.	69
Ռուսաստան	70
Ղազախստան	71
Ղրղզստան	74
Իրան	75
Մակեդոնիա	82
Ադրբեջան	87
Մոլդովա	89
Սերբիա	90
Ուկրաինա	138

Միջազգային առևտրի ազատությունը	
Սլովակիա	3
Հունգարիա	8
Էստոնիա	10
Չեխիա	18
Վրաստան	24
Ռումինիա	25
Բուլղարիա	36
Լատվիա	44
Լիտվա	53
Լեհաստան	60
Մոնտենեգրո	62
Սլովենիա	64
Ղրղզստան	68
Ուկրաինա	69
Մակեդոնիա	70
Ալբանիա	72
Բոսնիա և Հերցեգ.	77
Հայաստան	79
Ադրբեջան	80
Թուրքիա	83
Մոլդովա	88
Սերբիա	90
Խորվաթիա	91
Ղազախստան	95
Ռուսաստան	111
Իրան	134

Վարկային շուկայի, աշխատուժի և գործարարության կարգավորումը	
Մոնտենեգրո	12
Մակեդոնիա	17
Լիտվա	21
Էստոնիա	22
Բուլղարիա	23
Ղազախստան	31
Հունգարիա	35
Լատվիա	38
Ղրղզստան	41
Սլովակիա	45
Չեխիա	46
Վրաստան	56
Լեհաստան	64
Բոսնիա և Հերցեգ.	65
Ադրբեջան	66
Ռումինիա	74
Խորվաթիա	75
Սլովենիա	80
Ալբանիա	83
Հայաստան	86
Սերբիա	89
Մոլդովա	110
Ռուսաստան	111
Ուկրաինա	113
Թուրքիա	118
Իրան	130

Վարկային շուկայի կարգավորումը	
Էստոնիա	5
Մոնտենեգրո	7
Բուլղարիա	12
Լիտվա	20
Սլովակիա	22
Ղազախստան	24
Մակեդոնիա	35
Սերբիա	36
Ղրղզստան	37
Լատվիա	45
Խորվաթիա	48
Հունգարիա	51
Չեխիա	54
Բոսնիա և Հերցեգ.	58
Լեհաստան	69
Սլովենիա	72
Ռուսաստան	74
Ալբանիա	78
Ուկրաինա	79
Հայաստան	83
Ադրբեջան	96
Մոլդովա	97
Ռումինիա	101
Վրաստան	119
Թուրքիա	121
Իրան	122

Աշխատուժի շուկայի կարգավորումը	
Սերբիա	19
Լեհաստան	24
Ղազախստան	28
Լատվիա	36
Սլովակիա	40
Հունգարիա	43
Էստոնիա	44
Բուլղարիա	46
Չեխիա	53
Բոսնիա և Հերցեգ.	54
Լիտվա	56
Խորվաթիա	58
Հայաստան	60
Վրաստան	66
Սլովենիա	71
Ադրբեջան	72
Իրան	76
Ղրղզստան	77
Ուկրաինա	81
Ռուսաստան	85
Մակեդոնիա	86
Մոնտենեգրո	87
Մոլդովա	94
Ռումինիա	106
Ալբանիա	123
Թուրքիա	131

Գործարարության կարգավորումը	
Սլովակիա	7
Լեհաստան	11
Ադրբեջան	28
Սլովենիա	31
Լատվիա	35
Ղրղզստան	47
Ռուսաստան	51
Հայաստան	54
Էստոնիա	55
Ղազախստան	56
Վրաստան	61
Բուլղարիա	71
Լիտվա	74
Իրան	78
Չեխիա	88
Բոսնիա և Հերցեգ.	92
Հունգարիա	97
Ռումինիա	99
Մոլդովա	103
Սերբիա	108
Ալբանիա	110
Մակեդոնիա	114
Մոնտենեգրո	116
Խորվաթիա	120
Ուկրաինա	136
Թուրքիա	138